

Շուտով կմեկնարկի 'Երգը' բարեկամության կամուրջ խորագիրը կրող ռուսական երգի փառատոնը

13.09.2016

Գեղարքունիքի մարզի հանրակրթական դպրոցներն ընդգրկված են 'Երգը' բարեկամության կամուրջ խորագիրը կրող ռուսական երգի փառատոնի դպրոցական փուլում: Փառատոնի կազմակերպման եւ անցկացման հետ կապված խնդիրները սեպտեմբերի 13-ին քննարկվեցին Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Անդրանիկ Հակոբյանի մոտ՝ փառատոնի կազմկոմիտեի և Գեղարքունիքի մարզպետարանի ԿՄՍ վարչության ներկայացուցիչների մասնակցությամբ: Ինչպես ներկայացրին փառատոնի կազմկոմիտեի ներկայացուցիչները, արդեն ավանդական դարձած 'Երգը' բարեկամության կամուրջ ռուսական երգի փառատոնն անցկացվելու է մի քանի փուլերով: Դպրոցական փուլը կայանալու է սեպտեմբերի երկրորդ կեսից հոկտեմբերի 21-ին, մարզային փուլը՝ հոկտեմբերի 21-ից նոյեմբերի 10-ին, հանրապետական փուլը՝ նոյեմբերի 15-ից դեկտեմբերի 15-ին: Փառատոնի ընթացքում դպրոցականները ներկայացնելու են մեկական ռուսական ժողովրդական, հայրենասիրական, մանկական եւ էստրադային, ինչպես նաև ռուսաց լեզվով հայկական երգեր: Կազմակերպվելու է նաև լավագույն շարադրությունների, ինչպես նաև Ռուսաց լեզվի եւ գրականության լավագույն ուսուցչի մրցույթ: Փառատոնի արդյունքների ամփոփումից հետո կկատարվի մրցանակաբաշխություն: Կազմկոմիտեն ներկայացնում են Ռուսաստանի հայերի միությունը, Ռուսաց լեզվի զարգացման հայկական կենտրոնը, Հայաստանի կոմպոզիտորների եւ երաժշտագետների միությունը, ՀՀ Կրթության եւ գիտության, ՀՀ Սշակույթի նախարարությունները, Երեւանի քաղաքապետարանը, մարզպետարանները: Նախորդ տարիներին մեր աշակերտներն ակտիվորեն մասնակցել են փառատոնին, իսկ այս տարի փորձելու ենք էապես մեծացնել աշակերտների ներգրավվածությունը, քանի որ անչափ կարևորում ենք ռուսերեն լեզվի, գրականության ուսուցումը, մեր դպրոցականներին ռուսական երգի ու մշակութային արժեքների հետ հաղորդակցելը, առհասարակ օտար լեզուների ուսուցումը: Շուտով եմ, որ մեր մարզը ոչ միայն կցուցաբերի ակտիվ մասնակցություն, այլ նաև կնվաճի մրցանակային տեղեր՝նշեց Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Անդրանիկ Հակոբյանը: